

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԾՐԱԳԻՐ**



**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԷՋԵՐ
1.	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
2.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
3.	ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	5
4.	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ	5
5.	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ	8
5.1.	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	9
5.2.	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	10
5.3.	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	12
6.	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	13
6.1.	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	13
6.1.1	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	13
6.1.2	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	15
6.1.3	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	16
6.2	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	17
6.2.1	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	17
6.2.2	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	22
6.2.3	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	24
6.3.	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	26

6.3.1	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	26
6.3.2	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	28
6.3.3	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	29
7.	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ)	30
8.	ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	31
9.	ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱՋԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	32
10.	ԿՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (Հավելված N 1)	34
11.	ԿՏՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱՋԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (Հավելված N 2)	39

## 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ծրագրում գործածվող հապավումները՝

- ՀՎ՝** հանրակրթության վարչություն
- ՆՄՄԿՎ՝** նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն
- ՌԳՍՊՎԳՎ՝** ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն
- ԻԱՓՎ՝** իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
- ՀՀԿԲ՝** հանրության հետ կապերի բաժին
- ՆՈՒՀ՝** նախադպրոցական ուսումնական հաստատություն
- ՀՈՒՀ՝** հանրակրթական ուսումնական հաստատություն
- ՆՄԱՈՒՀ՝** նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն
- ՄՄՈՒՀ՝** միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
- ՏԻՄ՝** տեղական ինքնակառավարման մարմին
- ԱՈՒԿ** «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիր
- Ծրագիր՝**
- ԿԳՄՍՆ՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախ արարություն



## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև տեսչական մարմին կամ՝ ԿՏՄ) վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող, «Կառավարությանը ենթակա պետական մարմին է:

**Տեսչական մարմնի նպատակն է՝** օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության (միջնակարգ կրթության), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

**Տեսչական մարմնի խնդիրներն են՝** վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարումը և «Օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է՝ ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» «Օրենքով, հաշվի առնելով «Կառավարության գործունեության ծրագիրը, կրթության բնագավառի մարտահրավերներն ու զարգացման միտումները և տեսչական մարմնի նախորդ տարիների գործունեության արդյունքները՝ կրթության որակի, բովանդակության, մատչելիության, անվտանգության, կառավարման և արդյունավետության ուղղություններով:

## 3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- 1) հանրակրթության վարչություն.
- 2) նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն.
- 3) ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն.
- 4) իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն.
- 5) հանրության հետ կապերի բաժին.
- 6) որակի ապահովման բաժին:



#### 4. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԿԱ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ

Համաձայն գործունեության տարեկան ծրագրերի՝ իրականացվել են տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների բարեփոխումներին միտված գործառույթներ, որոնցից մի քանիսը՝ աշխատանքային պարտականություն համարվելուց զատ, ընդունում ենք որպես ձեռքբերում.

**1. Տեսչական մարմնում մշակվել, փորձարկվել և գործածության մեջ է դրվել կրթական-վերահսկողական գործիքակազմ, որը հնարավորություն է ընձեռում գնահատել ուսումնական հաստատությունների կրթական գործունեության այն ուղղությունները, որոնց գնահատումը հնարավոր չէ իրականացնել ՀՀ կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերով:**

Դրանք են.

**1) Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարած դասերի դասալսումների ձևաթղթի և դասալսումների ուղեցույցի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի՝ որպես գնահատման գործիքակազմի առկայությունը հնարավորություն է ստեղծում առավել անկողմնակալ և ճշգրիտ գնահատել ուսուցչի մանկավարժական հմտությունները, մասնագիտական և ՏՀՏ կիրառման կարողությունները, ուսուցման և սովորողների ուսումնառության որակը: Ձևաթղթի գործածմամբ իրականացված դասալսումների արդյունքում և՛ վերահսկողություն իրականացնող մարմինը, և՛ տվյալ ուսումնական հաստատությունը հնարավորություն կունենան պարզել կրթական գործընթացի առկա վիճակը և համապատասխան միջոցներ ձեռնարկել ուսուցման և ուսումնառության որակի բարձրացման ուղղությամբ:

**2) Սովորողների ընթերցելու և ընկալելու կարողությունների գնահատման գործիքակազմի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի միջոցով իրականացվում է «Մայրենի» առարկայի արդյունավետ ուսուցումն իրականացնելու ուղղությամբ տարրական դպրոցի 4-րդ դասարանի սովորողների կարողությունների գնահատում, կարողությունների ձևավորման վրա տարբեր գործոնների ազդեցության հայտնաբերում, առաջարկությունների ներկայացում, մեթոդական աջակցության ցուցաբերում:



**3) Հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի միջոցով թիրախավորվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար իրականացվող (մատուցվող) ծառայությունները դպրոցական և տարածքային մակարդակներում:

**4) Կրթության էլեկտրոնային ուսուցման գործիքների հասանելիության (չուսումնասիրվող առարկաների առկայություն) գնահատման ձևաթղթի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի միջոցով կրթության էլեկտրոնային ուսուցման գործիքների հասանելիության (չուսումնասիրվող առարկաների առկայություն) նկատմամբ իրականացվել է վերահսկողություն (ուսումնասիրություն), արդյունքները ներկայացվել են լիազոր մարմնին:

**5) ՆՄԱՌԻՀ-ի և ՄՄՌԻՀ-ի ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի միջոցով գնահատվում է մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին և կարողություններին համապատասխան՝ կրթության բովանդակությանը, մասնագիտական ուղղվածության և անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ծավալը ստանալուն ուղղված ծրագրերի և միջոցառումների առկայությունը:

**6) Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության գործիքակազմ (ձևաթղթեր) մշակում և ներդնում:**

Ձևաթուղթը դեռևս չի փորձարկվել: Նշված ձևաթղթով ուսումնասիրությունն իրականացնելու դեպքում, համապատասխան մասնագետը, կուսումնասիրի հաստատության լիցենզիայի տրման, լիցենզիայով ներկայացված պահանջների պահպանման օրինականությունը և, անհրաժեշտությունից ելնելով, կներկայացնի



առաջարկություն՝ տվյալ իրավաբանական անձին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու վերաբերյալ:

**7) ՆՄԱՈՒՀ-ի և ՄՄՈՒՀ-ի կրթության որակի գնահատման ձևաթղթի մշակում և ներդնում:**

Ձևաթղթի միջոցով ուսումնական հաստատություններում ըստ նախապես ընտրված մասնագիտության իրականացվում է ապագա մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի գնահատում: Գնահատման արդյունքում ուսումնական հաստատությունը հնարավորություն է ունենում պարզելու տվյալ մասնագիտության բարելավման ենթակա ուղղությունները:

**8) Մեթոդական ուղեցույցների մշակում և ներդնում:**

Մշակվել են ՆՈՒՀ-երի, ՀՈՒՀ-երի, ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-երի կրթական գործունեությունը բնութագրող ռիսկայնության հիմնական չափանիշների վերագնահատման համար անհրաժեշտ տվյալների լրացման մեթոդական ուղեցույցներ:

Ուղեցույցների միջոցով տեսչական մարմինը աջակցում է ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ ուսումնական հաստատությունների կրթական գործունեությունը բնութագրող ռիսկայնության հիմնական չափանիշների վերագնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը համապատասխան հավելվածում լրացնելու գործընթացին:

**2. Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվել է արագ արձագանքման խումբ:**

Խումբը ուսումնական հաստատությունների բնականոն ուսումնական գործընթացը խաթարող իրավիճակներ առաջանալու դեպքում անմիջապես մեկնում է տվյալ վայր և ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի մասնակիցներին տեղեկացնում նրանց իրավունքների և պարտականությունների մասին, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցություն է ցուցաբերում, բացատրական աշխատանքներ և կանխարգելիչ գործունեություն իրականացնում: Արագ արձագանքման

խմբի գործունեության արդյունքում կանխվել են ՀՀ ուսումնական հաստատությունների բնականոն գործունեության խաթարման հնարավոր անցանկալի հետևանքները:

### **3. Տեսչական մարմնի նոր կայքի գործարկում:**

Գործարկվել է տեսչական մարմնի նոր կայքը՝ տեխնիկական արդի լուծումներով և առավել լայն հնարավորություններով:

### **4. «Գործք» ամսագրի հետ կնքված հուշագրի հիման վրա իրականացվող համագործակցություն:**

Տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի կողմից տրամադրվող՝ տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող նյութերը հրապարակվում են թե՛ էլեկտրոնային, թե՛ տպագիր ամսագրերում:

## **5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

2022 թվականի առաջին 3 եռամսյակներում պլանավորված վերահսկողական (78 դպրոցներ, 1 նախնական մասնագիտական և 3 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ), ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման բոլոր գործառույթներն իրականացվել են:

2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով 2022 թվականի III եռամսյակում իրականացվել են 27 վերստուգումներ ՀՀ 17 նախադպրոցական, 7 հանրակրթական, 3 նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում:

Իրականացված գործառույթների արդյունքում կազմված հաշվետվությունները հրապարակվել են տեսչական մարմնի պաշտոնական կայքում. <http://www.eib.am/reports/>:



## 5.1. ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախադպրոցական ուսումնական հաստատություններ չեն ներառվել (ըստ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության):

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել են ԿՏՄ գործունեության 2022 թվականի գործունեության ծրագրով նախատեսված կանխարգելիչ, իրազեկման գործառույթներ:

2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով 2022 թվականի III եռամսյակում վերստուգումներ են իրականացվել 17 ՆՈՒՀ-երում: Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ նշված ՆՈՒՀ-երի տնօրեններին տրված 55 (մասամբ կատարված կամ չկատարված) հանձնարարականներից կատարվել են 27-ը:

17 մանկապարտեզներից **11-ում** հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 11 ակտ:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ (խորհրդատվական և այլ մեթոդական աջակցության) 6 միջոցառումներ՝ 87 մանկապարտեզների տնօրենների մասնակցությամբ:

ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանների համաձայն, հիմք ընդունելով ԿՏՄ 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ տեսչական մարմնի կողմից իրականացվել են բացատրական աշխատանքներ և կանխարգելիչ միջոցառումներ՝ ըստ տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝ 27.12.2019թ. № 2(21)-L որոշմամբ



հաստատված ձևաթղթերի (Հավելված № 1): Միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է ԿՏՄ պաշտոնական կայքում. <http://www.eib.am/reports/>:

## 5.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2022 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2022 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով հանրակրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

ԿՏՄ 2022 թվականի ստուգումների ծրագրով հանրակրթության ոլորտում նախատեսված 78 ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 75 (96%) հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ նաև՝ դպրոց), կազմվել է 75 ակտ:

Դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից: Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվել են նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

Վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով 2022 թվականի II եռամսյակում ստուգված 10 դպրոցներում իրականացվել է «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» պիլոտային ծրագիրը (ԱՌԻԿ ծրագիր):

Դասալսումները իրականացվել են այն դասարաններում, որտեղ տրվել են գրավոր աշխատանքներ: Մրցութային կարգով ընտրված մասնագետների ներգրավումը իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում ներկայացրել են սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման, կրթության

բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից յուրաքանչյուր դպրոցի մասով ներկայացվել են ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, տրվել են կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ:

2022 թվականի առաջին երեք եռամսյակներում ստուգված 78 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում կիրառվել են հանրակրթական ուսումնական հաստատության ներառական կրթական միջավայրի, կրթության էլեկտրոնային ուսուցման գործիքների հասանելիության (չուսումնասիրվող առարկաների առկայություն) գնահատման ձևաթղթերը: Նշված ձևաթղթերից առաջինով գնահատում իրականացվել է 45, իսկ երկրորդով՝ 1 ուսումնական հաստատություններում: Գնահատման արդյունքների վերլուծությունը ներկայացվել է լիազոր մարմիններին՝ ԿԳՄՍ նախարարին, մարզպետներին:

2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ ԿՏՄ ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով 2022 թվականի III եռամսյակում իրականացվել են 7 վերստուգումներ ՀՀ 7 հանրակրթական ուսումնական հաստատություններում: Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ ՀՈՒՀ-երի տնօրեններին տրված 10 (մասամբ կատարված կամ չկատարված) հանձնարարականներից կատարվել են 8-ը: 7 ՀՈՒՀ-երից 2-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 2 ակտ:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է կանխարգելիչ (աջակցման, խորհրդատվական) 9 հեռավար միջոցառում 245 դպրոցների տնօրենների մասնակցությամբ:

### 5.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2022 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2022 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

ԿՏՄ 2022 թվականի ստուգումների ծրագրով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված 4 ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 3 հաստատություններում, կազմվել է 3 ակտ: Ըստ բոլոր ստուգաթերթերի՝ 3 ստուգումներ էլ իրականացվել են ԿԳՄՍՆ-ից և ուսումնական հաստատությունների տնօրեններից ստացված գրությունների հիման վրա:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին: Ներառական կրթական միջավայրի գնահատում չի իրականացվել ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բացակայության պատճառով:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 5 հեռավար կանխարգելիչ միջոցառում (մեթոդական աջակցության, խորհրդատվական)՝ 107 տնօրենների մասնակցությամբ:

### 6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Կրթական գործունեության տեսանկյունից ուսումնական հաստատության ռիսկը կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության

որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոնների ի հայտ գալու հավանականությունն է՝ հաշվի առնելով դրանց բացասական հետևանքները:

Ներկայացնենք ԿՏՄ 2022 թվականի առաջին 3 եռամսյակների գործունեության ընթացքում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերն՝ ըստ վերահսկողության ոլորտների:

## 6.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

### 6.1.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների ընտրությանը և նշանակմանը (12 մանկավարժական աշխատողներ՝ 8 մանկապարտեզներում),
- կրթական գործունեության թույլտվության՝ լիցենզիայի բացակայությանը (6 մանկապարտեզներում),
- մանկապարտեզների հաստիքացուցակով, ըստ պաշտոնային դրույքաչափերի, մանկավարժական աշխատողների չհատկացված հաստիքային միավորներին (ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝ 4, մեթոդիստ, երաժշտության դաստիարակ՝ 1-ական մանկապարտեզներում),
- մանկապարտեզների հաստիքացուցակով, ըստ պաշտոնային դրույքաչափերի, մանկավարժական աշխատողների պակաս հատկացված հաստիքային միավորներին (դաստիարակ՝ 2 մանկապարտեզներում),
- մանկապարտեզների խմբերում երեխաների գերբեռնվածությանը (2 մանկապարտեզներում):

Նույնաբովանդակ խնդիրներ, անհամապատասխանություններ են արձանագրվել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանների



աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացված բացատրական և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում:

Մասնավորապես՝

- կրթական գործունեության թույլտվության՝ լիցենզիայի բացակայություն. 4 համայնքներից 3-ի (75%) մանկապարտեզների 35%-ում.

- տվյալ տարիքային հասակի երեխաների համար կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիայի բացակայություն. 4 համայնքներից 2-ի (50%)՝ լիցենզիա ունեցող մանկապարտեզների 83%-ում.

- նախադպրոցական կրթական գործունեության լիցենզիաներով (հավելվածներով) ամրագրված՝ սաների համակազմերի սահմանային թվերի գերազանցում. 4 համայնքներից 3-ի (75%)՝ լիցենզիա ունեցող մանկապարտեզների 40%-ում.

- մանկավարժական աշխատողների նշանակման (ընտրության) անհամապատասխանություններ. բոլոր 4 (100%) համայնքների մանկապարտեզների 75%-ում, որոնք վերաբերել են 80 մանկավարժական աշխատողների նշանակմանը՝ ներառյալ մրցութային կարգով մանկավարժական աշխատողների թափուր տեղի համալրումը.

- մանկավարժական աշխատողների պակաս հատկացված հաստիքային միավորներ կամ չհատկացված հաստիքներ. բոլոր 4 համայնքների (100%) մանկապարտեզների 98%-ում:

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտ են հանդիսանում երեխաների կրթական իրավունքի պահպանմանը՝

- մանկավարժական աշխատողների պակաս կամ չհատկացված հաստիքային միավորների,

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,

- գերբեռնված խմբերի առկայությունն է,

ինչպես նաև կրթական գործունեության թույլտվության՝ լիցենզիայի բացակայությունը:

Նախատեսվածից պակաս հատկացված հաստիքային միավորների, համապատասխան որակավորում չունեցող կամ իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող մանկավարժական աշխատողների,



գերբեռնված խմբերի առկայության պարագայում խաթարվում են կրթական գործընթացի և՛ լիարժեք կազմակերպումը, և՛ իրականացումը, ինչպես նաև չի ապահովվում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջների կատարումը:

**6.1.2. ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Նախադպրոցական կրթության ոլորտում բացահայտված ռիսկերի նվազեցման, մանկապարտեզների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով 11 ՆՈՒՀ-երում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 27 խախտումներ, տրվել են 26 հանձնարարականներ: Մեկ խախտման վերաբերյալ հանձնարարական չի տրվել՝ ստուգման պահին խախտման հետևանքը վերացած լինելու պատճառով (ապահովված է եղել մանկավարժական աշխատողի՝ պահանջվող համապատասխան աշխատանքային ստաժը (աղյուսակ 1)):

**Աղյուսակ 1**

Ստուգված հաստատությունների թիվը	Հայտնաբերված խախտումների թիվը	Տրված հանձնարարականների թիվը
17	27	26

Համայնքապետարաններում իրականացված միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ուղարկվել է ԿԳՄՍ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին՝ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ առաջարկով, իսկ վերահսկողական գործառույթների վերաբերյալ հաշվետվությունը՝ ԿԳՄՍ նախարարին:

Պատասխան գրություն ստացվել է Եղեգնաձոր համայնքի ղեկավարից, համաձայն որի՝

1. լիենզիայի ապահովումն ընթացքի մեջ է,
2. հաստիքացուցակները կհամապատասխանեցվեն,

3. մանկավարժական աշխատողների նշանակումը կատարվել է մասամբ (ստացել է համապատասխան որակավորումը, լրացել է անհրաժեշտ ստաժը, ազատվել է աշխատանքից, շարունակում է աշխատել՝ մասնագետ չլինելու պատճառով),

4. խմբերի խտությունը համապատասխանեցվել է:

### **6.1.3. ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՌԻԴԴԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**Նախադպրոցական ոլորտի** ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կմշակվի ձևաթուղթ ՆՈՒՀ-երի կողմից իրականացվող ներքին գնահատման ընթացակարգի ուսումնասիրության նպատակով: Ձևաթուղթը կփորձարկվի առնվազն 10 ՆՈՒՀ-երում:

Կիրականացվեն ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Կլրամշակվեն ՆՈՒՀ-երում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:

Համաձայն 2023 թվականի ստուգումների ծրագրի՝ կիրականացվեն ստուգումներ 11 ՆՈՒՀ-երում:

## **6.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ**

### **6.2.1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ**

Հանրակրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների անհամապատասխանություններին՝ 57 դպրոցներում (73%),
- մանկավարժական աշխատողների նշանակումներին՝ 54 դպրոցներում (69%).
- սովորողների համակազմի ձևավորմանը՝ 29 դպրոցներում (37%):



Վերահսկողական գործառույթների շրջանակում ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրված «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաների գրավոր աշխատանքների արդյունքները (գնահատումն իրականացվել է 10 միավորային սանդղակով՝ 1-3 միավոր՝ «Անբավարար», 4-6 միավոր՝ «Բավարար», 7-8 միավոր՝ «Լավ», 9-10 միավոր՝ «Գերազանց») այսպիսին են.

«Հայոց լեզու» առարկայից տրված թելադրությանը մասնակցած 1693 սովորողներից «Գերազանց» են գնահատվել 230-ը (14%), «Լավ»՝ 464-ը (27%), «Բավարար»՝ 515-ը (30%), «Անբավարար»՝ 484-ը (29%): Միջին գնահատականը կազմել է 5.4 («Բավարար») միավոր:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 1663 սովորողներից «Գերազանց» են գնահատվել 55-ը (3%), «Լավ»՝ 198-ը (12%), «Բավարար»՝ 651-ը (39%), «Անբավարար»՝ 759-ը (46%): Միջին գնահատականը կազմել է 4.1 («Բավարար») միավոր:

Ստուգված 10 դպրոցներում՝ ԱՌԽԿ ծրագրի շրջանակում՝ դասալսողների ներկայացրած եզրակացությունների, ինչպես նաև դասալսվող ուսուցիչների աշակերտների գրավոր աշխատանքների արդյունքների հիման վրա գնահատվել են նաև ուսուցիչները:

Ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար») սանդղակով: Այս համատեքստում նշված 10 դպրոցներում դասալսումներ են իրականացվել 51՝ հայոց լեզվի և գրականության 26 և մաթեմատիկայի 25 ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 3 դասալսում:

Ուսուցիչների գնահատման միջինացված արդյունքներն, ըստ առարկաների, ներկայացված են ստորև (աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների		
Բնութագրիչներ	Հայոց լեզու	Մաթեմատիկա
Ուսուցիչների՝ ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում	2.6 («Լավ»)	2.5 («Լավ»)
Դասերի արդյունավետությունը	3.6	3

	(«Գերազանց»)	(«Լավ»)
Ուսուցչի դասավանդած բոլոր դասարաններում ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (0-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	2.6 («Լավ»)	1.6 («Բավարար»)
Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	2.9 («Լավ»)	1.8 («Բավարար»)
<b>Ուսուցիչների ընդհանուր գնահատական</b>	<b>3</b> («Լավ»)	<b>2</b> («Բավարար»)

Այսպիսով, համաձայն վերոնշյալի՝ թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների պարագայում՝ արդյունքները ավելի ցածր են «Մաթեմատիկա» առարկայից:

Դասալսողների կողմից ներկայացված դասալսումների եզրակացությունների հիման վրա, յուրաքանչյուր դպրոցի մասով, կատարվել են վերլուծություններ: Վերլուծությունների արդյունքում վերհանված հիմնական խնդիրները, ըստ գնահատման ձևաթղթի բաժինների, այսպիսին են՝

**Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր**

– Դասավանդման գործընթացում հազվադեպ են կիրառվում ուսումնաօժանդակ բազմազան նյութեր, հաճախ միայն դասագրքով են առաջնորդվում:

– ՏՀՏ միջոցները դասավանդման գործընթացում կա՛մ չեն կիրառվում, կա՛մ հիմնականում արդյունավետ չեն կիրառվում:

– Դասարանի կահավորանքը հաճախ հարմարեցված չէ ուսումնական գործունության տեսակներին, ինչպես նաև բոլոր սովորողների կարիքներին:

– Դասավանդման գործընթացում բոլոր սովորողների նկատմամբ հարգանքի դրսևորումը, հաղորդակցման մշակույթն ունի բարելավման անհրաժեշտություն:

– Դասաժամը հաճախ չի օգտագործվում արդյունավետ՝ դասի ոչ ճիշտ պլանավորման, մասնավորապես՝ ժամանակի ոչ ճիշտ բաշխման հետևանքով, որոշ դեպքերում էլ առկա են դասարանի կառավարման խնդիրներ:

– Հաճախ դասարանում չեն սահմանվում աշխատանքային հստակ կանոններ՝ ուսումնական գործունեության տարբեր տեսակներին համապատասխան:

## **Բ) Դասավանդում**

– Դասերին հաճախ չեն ներկայացվում կամ հստակ սահմանվում դասի նպատակները, վերջնարդյունքները, ինչպես նաև որոշ դեպքերում դասարանական հանձնարարականները, հարցադրումները, կիրառվող մեթոդները միտված չեն վերջնարդյունքների ամբողջական ապահովմանը:

– Որոշ դեպքերում դասերը չեն արտացոլում միջառարկայական կապերը և առօրյալի հետ կապը, կիրառական նշանակություն ունեցող հարցեր և առաջադրանքներ հազվադեպ են առաջադրվում:

– Բոլոր սովորողները ներգրավված չեն դասերին, կան պասիվ սովորողներ:

– Սովորողների ընկալման կամ իմացության մակարդակի ստուգումը հաճախ մակերեսային է իրականացվում, չեն պահանջվում հիմնավորումներ:

– Չեն կիրառվում գնահատման տարբեր ձևեր և մեթոդներ, մասնավորապես՝ ձևավորող գնահատում գրեթե չի իրականացվում, հաճախ գնահատականները չեն հիմնավորվում, մեկնաբանվում, սովորողների առաջընթացը, հաջողությունները հազվադեպ են մատնանշվում. խրախուսման ձևեր հազվադեպ են կիրառվում:

– Հետադարձ կապի ապահովումը հիմնականում թույլ է, տնային առաջադրանքները ոչ միշտ են ստուգվում, ոչ բոլոր անհասկանալի հարցերին է անդրադարձ կատարվում:

## **Գ) Կարողունակությունների ձևավորում**

– Հաճախ առաջադրվող հարցերն ու առաջադրանքները միտված չեն սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.

– Հաճախ հնարավորություն չի ընձեռվում սովորողներին՝ ինքնուրույն գտնել իրենց սխալները, գտնել նորարարական և ինքնատիպ լուծումներ, հարցերին տալ հիմնավորումներ.

– Հաճախ բոլոր սովորողներին չի տրվում իրենց սեփական կարծիքը հայտնելու, ընտրության, դերեր և պարտականություններ ստանձնելու հնարավորություններ:

– Համագործակցային մթնոլորտի ձևավորմանը նպաստող ուսումնական գործունեության տեսակների ընտրությունը հաճախ նպատակային չի իրականացվում:



Դպրոցներում ներառական կրթական միջավայրի գնահատման գործընթացն իրականացվել է ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի համաձայն, որը բաղկացած է «Ուսումնական միջավայր», «Ֆիզիկական միջավայր» հավելվածներից: Հավելվածները բաղկացած են ներառական կրթական գործընթացին վերաբերող տարբեր բնութագրիչներից և դրանց համապատասխան գնահատման չափանիշներից: Բնութագրիչների գնահատումն իրականացվել է նախորդող 3 ուսումնական տարիների տեղեկատվության հիման վրա:

Ներառական կրթական միջավայրի գնահատման արդյունքների վերլուծության միջոցով վեր են հանվել այն խնդիրները, որոնք կարող են ազդել յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովմանը: Որոշիչ է առանձին վերցրած սովորողի՝ իր կարողություններին և կարիքներին համապատասխան, որակյալ կրթության ապահովման, նրա լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

Առանձնացվել է դպրոցների կողմից **արդյունավետ** իրականացվող և **զարգացման ենթակա** գործառույթներն՝ ըստ վերլուծության արդյունքների:

Զարգացման ենթակա գործառույթներն հիմնականում վերաբերել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար ֆիզիկական միջավայրի ապահովմանը:

Դպրոցները հիմնականում ապահովված չեն՝

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար (ըստ անհրաժեշտության) օժանդակող տեխնոլոգիաներով և սարքավորումներով (սայլակ, քայլակ, լսողական սարք, հարմարեցված գրենական պիտույքներ, հարմարեցված համակարգիչ և այլն),

- սովորողի անխոչընդոտ տեղաշարժն ապահովող՝ դպրոցի ներքին ֆիզիկական միջավայրով՝

- տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ դեղին գծեր, ուղենշող սալիկներ, տարածական կողմնորոշման ձայնային ազդանշաններ,



- սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ դասասենյակների և սանհանգույցների դռների լայնություն (82-91 սմ), դասասենյակում նստարանի շարքերի միջև հեռավորություն (82-91 սմ), սեղանների բարձրության համապատասխանություն սայլակի չափերին),

- դպրոցի բակում, խաղահրապարակում և մուտքի մոտ սովորողների անխոչընդոտ տեղաշարժի համար՝

- սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ անմիջապես մուտքի մոտ աստիճանների կողքից՝ չսայթաքող, դիմացկուն թեքահարթակով,

- հարկից հարկ տեղափոխվելու համար մատչելիությունն ապահովող վերելակով, այլ սարքավորումներով և հարմարանքներով,

- սովորողների համար մատչելի ուսումնական նյութերով՝ էլեկտրոնային, խոսող, բրայլյան տառատեսակներով, պարզեցված և հեշտ ընկալելի տեքստերով, ռեխնեֆային նկարազարդումներով գրքերով, թեստերով, նկարազարդ նյութերով, ժեստերի լեզվով թարգմանությամբ ապահովված ուսումնական տեսաֆիլմերով:

**Հանրակրթության ոլորտում** հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտում են սովորողների կրթական իրավունքի պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը՝

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների, տնօրենների տեղակալների, ուսուցիչների առկայությունն է,

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ֆիզիկական միջավայրի ոչ բավարար ապահովվածությունը:

Համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող վարչական և մանկավարժական աշխատողների, սահմանվածից մեկ դասարան բարձր կամ ցածր դասարան ընդունված սովորողների առկայության դեպքում խախտվում են սովորողների կրթական իրավունքները, չեն կատարվում հանրակրթության պետական կրթական չափորոշչի պահանջները, նվազում են կրթության որակն ու սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման մակարդակը:



## 6.2.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացված ծրագրային 78 ստուգումների արդյունքում արձանագրվել է 607 խախտում:

Խախտումների հետևանքների վերացման նպատակով տրվել է 143 հանձնարարական (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ստուգված հաստատությունների թիվը	Հայտնաբերված խախտումների թիվը	Տրված հանձնարարականների թիվը
78	607	143

Վերահսկողական գործառույթների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվել են ԿՏՄ կայքում և համապատասխան առաջարկներով՝ տրամադրվել ԿԳՄՍ նախարարին:

Դպրոցներում իրականացված կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ սովորողների առաջադիմության և դասավանդման արդյունավետության բարձրացմանը միտված առաջարկներով՝ տրամադրվել են դպրոցների տնօրեններին: Առաջարկները հիմնականում վերաբերել են ուսումնական նպաստավոր միջավայրի և դասավանդման գործընթացի բարելավմանը, սովորողների մոտ ինքնուրույնության, համագործակցության, քննադատական և ստեղծագործական մտածողության զագացմանը նպաստող կարողունակությունների ձևավորմանը:

Ներառական կրթական միջավայրի գնահատման արդյունքների վերլուծությունը ներկայացվել է ԿԳՄՍ նախարարին և համապատասխան մարզպետներին:

Ելնելով գնահատման արդյունքներից առաջարկվել է՝ իրենց լիազորությունների շրջանակներում՝ միջոցներ ձեռնարկել զարգացման ենթակա գործառույթները (բնութագրիչները) բարելավելու ուղղությամբ:



2022 թվականի առաջին 3 եռամսյակներում, ըստ ստուգումների ծրագրի, ստուգված 78 ՀՈՒՀ-երից 4-ի դեպքում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Ստուգված 78 ՀՈՒՀ-երից 44-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2022 թվականի առաջին 3 եռամսյակներում (աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

Հանձնարարականների թիվը			
Տրված	Կատարված	Ընթացքի մեջ գտնվող	Չկատարված
143	92	30	21

Հանրակրթության ոլորտում չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականները վերաբերում են կադրային նշանակումներին:

2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով 2022 թվականի III եռամսյակում իրականացվել են 7 վերստուգումներ ՀՀ 7 ՀՈՒՀ-երում:

Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ 7 ՀՈՒՀ-երի տնօրենների կողմից մասամբ կատարված կամ չկատարված 10 հանձնարարականներից 8-ը կատարվել են: Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 2 ՀՈՒՀ-երում, որոնց տրվել են հանձնարարականներ:

Կարևոր է նշել, որ թե՛ կատարված 8, թե՛ չկատարված 2 հանձնարարականները վերաբերել են կադրային նշանակումներին:

### 6.2.3. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում** 2023 թվականին նախատեսված ստուգումների ընթացքում սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով հանրակրթական դպրոցների 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին կտրվեն գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից:

Գրավոր աշխատանքների արդյունքները, որպես վիճակագրական տվյալներ, կգործածվեն տեսչական մարմնի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում:

Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ կտրվեն 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ կուսումնասիրվեն նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումները կիրականացվեն 12 ստուգաթերթերով:

Նախատեսվել է 2023 թվականին ԱՌԻԿ ծրագիրն իրականացնել ստուգվող դպրոցներից 30-ում: Մասնավորապես՝

– ուսումնական պարապմունքների լսումներ, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.

– դասավանդողի մանկավարժական-մեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում.

– ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում, մասնագիտական կարծիքի (հաշվետվետվություն, եզրակացություն) ներկայացում և այլն:





Դասալսումները կիրականացվեն այն դասարաններում, որտեղ կտրվեն գրավոր աշխատանքներ:

Դասալսում իրականացնող մասնագետների ներգրավումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված՝ մրցութային կարգով:

Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում կներկայացնեն սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից առավել ճշգրիտ կներկայացվեն հանրակրթական դպրոցներում ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները: Ուսումնական հաստատություններին կներկայացվեն կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ, իսկ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կրթության որակի առկա վիճակի մասին հաշվետվություններ, վերլուծական եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Կմշակվի և կփորձարկվի պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողների բացահայտման գործընթացի ձևաթուղթ:

Ստուգման գործընթացի շրջանակներում ՀՈՒՀ-երում կիրականացվի ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված գործիքակազմի:

Համաձայն 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն 120 ՀՈՒՀ-երում: Կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Կիրականացվեն ՀՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Կլրամշակվեն ՀՈՒՀ-երում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:



### 6.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

#### 6.3.1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- մանկավարժական կադրերի նշանակմանը՝ 4 հաստատություններում,
- կառավարման խորհրդի գործունեությանը՝ 3 հաստատություններում,
- ուսանողների ընդունելությալն, վերականգնմանը և տեղափոխմանը՝ 3 հաստատություններում,
- պետական ամփոփոփիչ քննությունների կազմակերպմանը և անցկացմանը, ավարտական փաստաթղթերի բաշխմանը՝ 3 հաստատություններում,
- մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացին՝ 3 հաստատություններում:

Վերահսկողական գործառույթների շրջանակում հաստատություններում իրականացվել է կրթական գործընթացի որակի գնահատում՝ ըստ նախապես ընտրված մասնագիտության: Գնահատման ձևաթուղթը բաղկացած է «Տնօրեն», «Ուսանողի հարցաթերթ», «Գործընկեր կազմակերպություն» հավելվածներից: Գնահատման արդյունքների համադրումն ու վերլուծությունը, ըստ ձևաթղթերի և հարցաթերթերի տվյալների, ցույց են տալիս, որ հաստատություններում առկա են գործընթացներ, որոնց արդյունավետությունը նկատելի է (ուժեղ կողմեր), սակայն միաժամանակ առկա են գործընթացներ, որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն (զարգացման ենթակա գործառույթներ):

- տվյալ մասնագիտության նյութատեխնիկական բազայի բարելավումը,
- տվյալ մասնագիտության բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի աճը,



- հաստատության կողմից տրամադրվող մասնագիտական գրականությունը (այդ թվում՝ էլեկտրոնային) սովորողներին հասանելի լինելը,
- մասնագիտական առարկաներից մանկավարժների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպումը,
- կարիերայի կենտրոնի հետ արդյունավետ համագործակցությունը,
- պրակտիկայի արդյունավետության բարձրացումը,
- ավարտական պրակտիկաների արդյունքում շրջանավարտներին աշխատանքի տեղավորումը տվյալ գործընկերոջ մոտ,
- սոցիալական գործընկերների (գործատուների) ակտիվ ներգրավումը հաստատության պետական որակավորման հանձնաժողովի կազմում,
- կրթական գործընթացում սոցիալական գործընկերների ակտիվ ներգրավումը,
- տվյալ ոլորտում զբաղվածության վերաբերյալ սովորողներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առկա հիմնական ռիսկերը հաստատություններում՝

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների առկայությունն է:

Համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների դեպքում հաստատություններում սահմանված կարգի խախտումներով են ընթանում պետական ամփոփիչ ստուգման, սովորողների ընդունելության, տեղափոխման, ուսանողական իրավունքի վերականգնման և այլ գործընթացներ: Թվարկված գործընթացները չեն կարող չազդել ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման և կրթության որակի վրա:

### 6.3.2. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված 7 ստուգումների արդյունքում արձանագրվել է 121 խախտում, տրվել է 29 հանձնարարական (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ստուգված հաստատությունների թիվը	Հայտնաբերված խախտումների թիվը	Տրված հանձնարարականների թիվը
7	121	29

2022 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգված 7 հաստատություններից մեկի դեպքում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել: Ստուգված 7 հաստատություններից 3-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2022 թվականի առաջին 3 եռամսյակներում:

Հանձնարարականների թիվը			
Տրված	Կատարված	Ընթացքի մեջ գտնվող	Չկատարված
17	8	1	8

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ընթացքի մեջ են հիմնականում կադրային նշանակումներին վերաբերող խախտումները:

ՆՄԱՌԻՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում իրականացված գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ կրթության որակի բարձրացմանը միտված առաջարկներով, տրամադրվել են համապատասխան հաստատությունների տնօրեններին:



Ելնելով գնահատման արդյունքներից՝ հաստատությունների տնօրեններին առաջարկվել է իրենց լիազորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել զարգացման ենթակա գործառույթների բարելավման ուղղություններով՝ հաշվի առնելով նաև գործատուների առաջարկները:

### **6.3.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների** ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում նախատեսվում է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատումը կիրականացվի՝ ըստ լիցենզիայով հատկացված և իրականացվող որևէ մասնագիտության:

Ստուգման գործընթացի շրջանակում ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում կիրականացվի ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված գործիքակազմի:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կիրականացվի լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության նպատակով մշակված գործիքակազմի փորձարկում՝ առնվազն 10 ուսումնական հաստատություններում:

Կիրականացվեն ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Կլրամշակվեն ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:

Համաձայն 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն ՀՀ 2 ՆՄԱՈՒՀ-ներում և 7 ՄՄՈՒՀ-ներում:

Կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

## **7. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ)**

ԿՏՄ կողմից իրականացվել է 117 ստուգում՝ ՀՀ 17 ՆՈՒՀ-երում, 90 ՀՈՒՀ-երում, 10 ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում: Ստուգումների տարեկան ծրագրով իրականացված ստուգումները 82-ն են, որը կազմում է 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 130 ստուգումների 63%-ը: Իրականացված ծրագրային ստուգումներից 78-ը ՀՈՒՀ-եր են, 3-ը՝ ՄՄՈՒՀ-ներ, 1-ը՝ ՆՄԱՈՒՀ:

Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումները 35-ն են, որը կազմում է իրականացված ստուգումների 30%-ը: Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներն իրականացվել են ԿՏՄ-ում ստացված դիմումների (8՝ 22.9%), լիազոր մարմնից (1՝ 2.8%), հաստատության տնօրենից ստացված գրությունների հիման վրա (2՝ 5.7%), ինչպես նաև 2021 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված կամ չկատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով (24՝ 68.6%):

## **8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տեսչական մարմնում մշակվել և կառավարման խորհրդի քննարկմանն են ներկայացվել ՀՀ կրթության բնագավառի պետական վերահսկողության հայեցակարգը և «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

**ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ներառվել է «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելու միջոցառումը (2023 թվականի մարտի 1-ին տասնօրյակ):**

Ներկայումս տեսչական մարմնի վերահսկողական գործառնություններն (ստուգում, ուսումնասիրություն) իրականացվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սակայն սույն օրենքով հնարավոր չէ ամբողջությամբ կարգավորել կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողական գործունեության առանձնահատկություններից բխող գործառնություններն ու իրավահարաբերությունները: Ստեղծված իրավիճակը կարգավորելու նպատակով տեսչական մարմինը ձեռնամուխ է եղել ՀՀ կրթության բնագավառի պետական վերահսկողության հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) և «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) մշակման աշխատանքներին և այն ներկայացրել տեսչական մարմնի կառավարման խորհրդի քննարկմանը:

Հայեցակարգի հիման վրա մշակված օրենքով կկարգավորվեն ՀՀ նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթական ծրագրերի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի ապահովման, ուսուցման, ուսումնառության և գնահատման գործընթացների, ինչպես նաև կրթության կազմակերպման օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարաբերությունները: Օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական վերահսկողության առանձնահատկություններն ու իրավական հիմքերը, պետական վերահսկողություն իրականացնող անձանց իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և պետական վերահսկողության հետ կապված այլ հարաբերություններ:



Օրենքի ընդունմամբ կապահովվեն կրթության բնագավառի պետական վերահսկողության արդյունավետությունը, հաշվետվողականությունն ու որակը:

ԿՏՄ կողմից ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, դիտարկումներ՝ 27 իրավական ակտերի վերաբերյալ:

## **9. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրազեկելու՝ հնարավոր խախտումները կանխելու, հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ԿՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներն իրականացվել են:

Միջոցառումներն իրականացվում են նոր ձևաչափով. ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի համար իրականացվող խորհրդատվական և իրազեկման միջոցառումներից առաջ մասնակիցներին նախապես տրամադրվում է խորհրդատվական հանդիպման օրակարգը, ներկայացվելիք նյութերը: Մասնակիցները, օրակարգին ծանոթանալուց հետո, իրենց հարցերը գրավոր ձևով ուղղում են ԿՏՄ կայքէջին, իսկ հանդիպման ընթացքում ստանում դրանց սպառիչ պատասխանները:

Մասնագիտական ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր եռամսյակ հանրության հետ կապերի բաժնին են փոխանցվում ուսումնական հաստատությունների կողմից առավել շատ բարձրացված 5 հարցերն՝ իրենց պատասխանների հետ միասին: Հանրության հետ կապերի բաժինն էլ, իր հերթին, դրանք փոխանցում է «Գործք» ամսագրի խմբագրությանը՝ լուսաբանելու նպատակով:

Վերահսկողության ոլորտներում իրականացված կանխարգելիչ և իրազեկման գործառույթների քանակական պատկերն, ըստ վերահսկողության ոլորտների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.



Վերահսկողության ոլորտներ	Կանխարգելիչ և իրազեկման գործառույթներ
ՆՈՒՀ	6
ՀՈՒՀ	9
ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ	6
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ	4

Ծրագրի խնդիրներից բխող գործողությունները ներկայացված են 10-րդ բաժնում:

**10. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում 2023 թվականի խնդիրներին և  
ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	2	3	4	5	6
1.	ԿՏՄ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 11 ՆՈՒՀ-երում ստուգումներ	ՆՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում  Կրթության արդյունավետ կազմակերպմանը (ներառյալ՝ ուսուցմանը և ուսումնառությանը) աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Տարվա ընթացքում
2.	ՆՈՒՀ-երի կողմից իրականացվող ներքին գնահատման ընթացակարգի ուսումնասիրության ձևաթղթի մշակում, փորձարկում՝ առնվազն 10 ՆՈՒՀ-երում	Նախադպրոցական ոլորտի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ իրականացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Մշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
3.	Համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում (ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Արարատի մարզի Արարատի, Շիրակի մարզի Գյումրու, Լոռու մարզի Վանաձորի, Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումներում)՝ ըստ լրամշակված ձևաթղթի	ՏԻՄ աշխատակիցների՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրավագիտակցության բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Լրամշակում՝ I եռամսյակ,  իրականացում՝ II, III եռամսյակներ
4.	ԿՏՄ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված	ՀՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Տարվա ընթացքում

	120 ՀՈՒՀ-երում ստուգումներ	սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում  Կրթության արդյունավետ կազմակերպմանը (ներառյալ՝ ուսուցմանը և ուսումնառությանը) աջակցում			
5.	Ստուգվող առնվազն 30 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ, 11-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մայրենի» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից դասախոսումներ (ԱՈՒԿ ծրագիր)	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ Ներգրավված մասնագետներ	II, IV եռամսյակներ
6.	Ստուգվող 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից (գրավոր աշխատանք)	Ուսումնառության որակի բարելավմանը, չափորոշչային պահանջների ապահովմանը աջակցում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
7.	Ստուգվող ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ մշակված ձևաթղթի	ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի ապահովմանը աջակցություն	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
8.	Պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողների բացահայտման գործընթացի ուսումնասիրության ձևաթղթի մշակում, փորձարկում՝ առնվազն 30 ՀՈՒՀ-երում	Պարտադիր կրթության ապահովմանը աջակցություն	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Մշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
9.	Հանրությունից ստացված դիմումների, հարցումների, բողոքների քննարկում, պարզաբանում, ուսումնասիրություն, ստուգում	Դիմումներում բարձրացված հարցերի լուծում, խնդիրների վերհանում	ՀՎ ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
10.	ԿՏՄ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 9 ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ստուգում	ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում



		պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում  Կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացում			
11.	Ստուգվող ՆՄԱՌԻՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը աջակցություն	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Տարվա ընթացքում
12.	Ստուգվող ՄՄՌԻՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանը աջակցություն	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Տարվա ընթացքում
13.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության ձևաթղթի փորձարկում՝ առնվազն 10 հաստատություններում	Իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացում (ըստ անհրաժեշտության)	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՄՊՎԳՎ	Տարվա ընթացքում
14.	Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմվող փաստաթղթերի նախագծերի, կրթության որակի և չափորոշիչների բարելավման, ինչպես նաև գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու	Կրթության բնագավառի օրենսդրության բարելավմանն աջակցում	ԻԱՓՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում



	անհրաժեշտության վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների իրավական քննարկում և դրա հիման վրա հիմնավորված գրավոր եզրակացության ներկայացում				
15.	Ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմում և սահմանված կարգով հաստատման ներկայացում	Վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և ուսումնական հաստատություններ	ՌԳՍՊՎԳՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	IV եռամսյակ
16.	Վերահսկողական գործառույթների արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների վերացման նպատակով տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների (գրությունների) հիման վրա ռիսկերի վերագնահատում (ըստ անհրաժեշտության)	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ուսումնական հաստատությունների ռիսկայնության որոշում և դասակարգում՝ առկա տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա	ՌԳՍՊՎԳՎ	---	Տարվա ընթացքում
17.	Իրականացված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական գործառույթների ազդեցության գնահատում	Իրականացված գործառույթները որքանով են նպաստել ԿՏՄ կանոնադրական նպատակների կատարմանը	ՀՀԿԲ	---	I, II կիսամյակներ
18.	Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ուսումնական հաստատություններին՝ նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների հետևանքների վերաբերյալ տրված հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ	Հետադարձ կապի ապահովում	ՀՎ ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Տարվա ընթացքում
19.	Ստուգաթերթերի լրամշակում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	ԻԱՓՎ	ՀՎ ՆՄՄԿՎ ՌԳՍՊՎԳՎ	I եռամսյակ

**11. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**  
**Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի**  
**2023 թվականի կանխարգելիչ և իրազեկման**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	2	3	4	5	6
1	Հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՀՈՒՀ) տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՀՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ՀՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	Հունվարի 2-3-րդ տասնօրյակներ, սեպտեմբերի 1-2-րդ տասնօրյակներ
2	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	Մարտի 2-3-րդ տասնօրյակներ

<p>3</p>	<p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	<p>ՀՎ</p>	<p>ՀՀԿԲ</p>	<p>Ապրիլի 2-3-րդ տասնօրյակներ</p>
<p>4</p>	<p>ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	<p>ՀՎ</p>	<p>ՀՀԿԲ</p>	<p>Մայիսի 2-3-րդ տասնօրյակներ</p>
<p>5</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	<p>ՀՎ</p>	<p>ՀՀԿԲ</p>	<p>Հունիսի 1-2-րդ տասնօրյակներ</p>



6	<p>ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	ՀՎ	ՀՀԿԲ	Հունիսի 2-3-րդ տասնօրյակներ
7	<p>ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	ՀՎ	ՀՀԿԲ	Հուլիսի 1-2-րդ տասնօրյակներ
8	<p>ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի (ՏԻՄ) համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների և ՆՈՒՀ-երի տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ (առկա/հեռավար)</p>	<p>ՏԻՄ և ՆՈՒՀ աջակցություն՝ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	ՀՎ	ՀՀԿԲ	Հուլիսի 2-3-րդ տասնօրյակներ
9	<p>Ավագ դպրոցներում սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում</p>	<p>Սովորողների և ծնողների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրազեկում</p>	ՀՀԿԲ	ՀՎ	Նոյեմբերի 1-2-րդ տասնօրյակներ





10	ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ- ների տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ	Ստուգումներից առաջ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	I եռամսյակ
11.	ՀՀ Տավուշի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի մարզերի ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ-ներում խորհրդատվական հանդիպում	Իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, ԿՏՄ կողմից ՄԿՈՒ ոլորտում իրականացվող լիցենզավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմին ծանոթացում	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	II եռամսյակ
12.	ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում խորհրդատվական հանդիպում		ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	III եռամսյակ
13.	ՀՀ Արմավիրի, Արարատի մարզերի և Երևանի ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում խորհրդատվական հանդիպում		ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	IV եռամսյակ
14.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների հետ (երկու հանդիպում)	Հանրության առավել ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում	ՀՀԿԲ	ՆՄՄԿՎ	Տարվա ընթացքում